

2015թ. երրորդ եռամսյակի Խոշոր հարկ վճարողների ՀՏ մոնիտորինգի ամփոփ  
ցուցանիշների վերլուծություն

Սույն վերլուծությունը իրականացվում է այն 527 հարկ վճարողների ամփոփ  
ցուցանիշների հիման վրա, որոնք ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանով ընդգրկված  
են Խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության կողմից 2015թ.-ի ընթացքում  
սպասարկվող հարկ վճարողների ցանկում:

Խոշոր հարկ վճարողների մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների  
համեմատական վերլուծությունը իրականացվում է նույն 527 հարկ վճարողների 2015  
և 2014 թվականների փաստացի տվյալների հիման վրա:

2015թ. երրորդ եռամսյակի ամփոփ ցուցանիշների վերլուծության հիման վրա  
կարելի է փաստել, որ

1. Իրացումից հասույթը կազմել է 1,038.2 մլրդ դրամ կամ նախորդ տարվա նույն  
եռամսյակի համեմատությամբ աճել է 10.5 %-ով:
2. Ներմուծման ծավալները կազմել են 193.9 մլրդ դրամ:
3. Արտահանման ծավալները կազմել են 133.1 մլրդ դրամ նախորդ տարվա նույն  
եռամսյակի 127,9 մլրդ դրամի փոխարեն:
4. Վճարված մաքսային վճարների ցուցանիշի առումով 2015թ.-ի երրորդ  
եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 39.6 մլրդ.  
դրամ:
5. Պետական բյուջե վճարված հարկերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշի  
առումով 2015թ.-ի երրորդ եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից  
վճարվել է շուրջ 117.7 մլրդ. դրամ: Ընդ որում, նշված կազմակերպությունների  
կողմից 2015թ.-ի երրորդ եռամսյակում վճարվել է հանրապետությունում  
հավաքագրված հարկային եկամուտների մոտ 55.8%-ը:
6. Հարկային մարմնի կողմից կատարվել են 157 հարկային ստուգումներ, այդ  
թվում բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից  
վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության  
88 ստուգումներ, որոնց արդյունքում առաջադրվել է բյուջե լրացուցիչ  
վճարման ենթակա գումարներ 9 մլրդ. դրամի չափով:
7. 01.10.2015թ.-ի դրությամբ խոշոր հարկ վճարողներն ունեցել են 124.3 մլրդ  
դրամ գերավճար, այդ թվում՝ ավելացված արժեքի հարկի գծով՝ 82.8 մլրդ  
դրամ, իսկ հարկային պարտավորություն՝ 14.5 մլրդ դրամ: Նշված  
ժամանակահատվածում պետական բյուջեից հարկ վճարողների

գերավճարների գումարներից ավելացված արժեքի հարկի վերադարձի ձևակերպում է կատարվել 13.4 մլրդ դրամի չափով, իսկ գերավճարների գումարներից այլ հարկատեսակների գծով հաշվանցվել է 4.1 մլրդ դրամի չափով:

8. Մեկ աշխատողի միջին ամսական ԱՎՈՒՄ-ը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելացել է 6.9%-ով և կազմել է 220 հազար դրամ: